

Վրաս. պրոլետարիատի աստղիացիա
(Հայկական սեկցիա)
№ 1 Մանկական սերիա № 1

ԱՐՏԱՇԵՍ ԴՈՒՅՎԱՆ

ՍՈՒՐԻԿԻ ՃԱՆԱՊԱՀՅՈՒԹՈՒԹՅՈՒՆԸ

ИНОТР.
ИНСТИТУТА
БЮРО
Академии Наук

891.995
7-75

~~N1299~~ 891.99 ₦

30 MAY 2011 1998 N309

ՎՐԱՍՏԱՆԻ ՊՐՈԼԵՏԱԳՐՈՂՆԵՐԻ ԱՍԽՈՑԻԱՑԻԱ (ՀԱՅԿԱԿԱՆ ՍԵԿԹՈՒՄ)

Ca9616

ԱՐՏԱՇԵՍ ԴՈՇՈՅԱՆ

ՍՈՒՐԻԿԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՂՈՒԹՅՈՒՆԸ



ՊԱՏՄԱՆ ԱԾՔ

50-2282

03 MAR 2013

8312

ԱՅԻΡԻԿԻ ՃԵՆԵՊՐԵԶՈՐԴՈՒԹՅԱՆԸ

Սուրիկի հայրը, Միխակը, յերեք ամիս եր, ինչ թողել եր իր ընտանիքը Բաթումում և ինը զնացել եր Տկիլբուլիի ածխանքերում աշխատելու։ Յեկ այդ յերեք ամսվա ընթացքում նրա ընտանիքը վոչ մի լուր չեր ստացել Միխակից։

Նրա ընսամնիքը բաղկացած եր հինգ հոգուց. կինը՝ Գայանեն և չորս զավակները, վորոնցից ամենամեծը Սուրբիկն եր:

Սուրբիկը 8 տարեկան եր, բայց ծնողների չքավորության պատճառով դպրոց չեր հաճախում:

Մի անգամ՝ յերեկոյան Սուբիկը սեղանի առաջ նստած՝ վայտի կտորներից իր համար փոքրիկ սայլակ եր շինում, իսկ մայրը տիտուր նրանած նրա դիմաց՝ գուլպա եր գործում։ Մյուս յերեխաները քնած եին։

Սուրբիկը նկատեց մոր տիրությունը և ձեռքի փայտիկն ու գանձակը դրեց սեղանի վրա:

— Մայրիկ, — ասաց նա ցածր ձախով. —
Հայրիկից լուր չկա, ի՞նչ պետք է անենք:

— Ի՞նչ կարող ենք անել, նա գնաց և մեզ
մոռացավ: Ով զիսե, կենդանի՝ յե, թե մեռած:
Յեթե կենդանի լիներ, գոնե մի նամակ կուղար-
կեր, — պատասխանեց մայրը արտասուբք սրբելով:



60523-67

— Մայրիկ, յես կգնամ և կգանեմ նրան,—
ասաց Սուրբիկը վասահ կերպով։

— Ու՞ր կգնաս, ի՞նչ ես ասում, ի՞նչպես
կարող ես գու նրան գանել։ Այդ ե պակաս, վոր
դու յել հորդ պես գնաս ու կորչես։

— Վ՞ոչ, յես չեմ կորչի։ Յես կհարցնեմ քե-
ռի Պետրոսից. Նա ցույց կատ ինձ ճանապահնը։

Յերկար խոսելուց ու վիճելուց հետո՝ Սու-
րբիկը կարողացավ համոզել մորը, վոր ինքը գնաւ
Տկվիրուլիի ածխահանքերը և գտնի հորը։

Իսկ յերբ Սուրբիկը անկողին մտավ, յերկար
ժամանակ մտածում եր իր ճանապահիորդու-
թյան մասին։

Քեռի Պետրոսը հարուստ վաճառական եր։
Նա Գայանեի մեծ յեղայրն եր և միշտ միայն
խորհուրդներ եր տալիս քրոջը, իսկ առանց զրա-
վականի՝ վոչ մի կոսեկ։

Առավոտը շատ վաղ զարթնեց Սուրբիկը։
Մայրը ավեց նրան իր վերջին վոսկե մատանին
և պատվիրեց տանել քեռի Պետրոսի մոտ զրավ
գնելու. միենույն ժամանակ իմանալ նրանից քա-
րածուխի հանքերի ճանապահնը։

— Քեռի Պետրոսի խանութը լիքն եր հաճա-
խորդներով, ուստի յերբ ներս մտավ Սուրբիկը,
նրա վրա ուշադրություն դարձնող չեղավ։ Քեռի
Պետրոսը, նստած իր զրամարկղի առաջ, փողեր
եր ստանում գնորդներից, իսկ ծառայողները

զբաղված եյին ըրինձ, յուղ, շաքար և այլն կըշ-
ռելով։

Սուրբիկը վախեվախ մոտեցավ քեռի Պետ-
րոսին և կանգնեց նրա առաջ։ Քեռին Սուրբիկին
տեսնելուն պես քիթն ու մոռւթը վեր թողեց
ու փնթվինթալով տասց։

— Հը, ի՞նչ ես առավոտ վաղ-վաղ առաջո
ցցվել։

— Քեռի, մայրիկս այս մատանին ուղար-
կեց ձեզ մոտ, վոր զրավ վերցնես, —կակազելով
տասց Սուրբիկը և մատանին տվեց նրան։

— Հա, —ուրախ բացականչեց քեռին և ըս-
կսեց զննել մատանին, —այս ի՞նչ ե, միթե տ-
վելի լավը չուներ մայրիկդ. որտ զրավը որն ե,
ծախեցեք, վերջանա զնա։

— Զե, քեռի, մայրիկս տասց, վոր զրավ
վերցնես, յես պետք ե գնամ ածխահանքերը
հայրիկիս գտնելու, փող կերեմ այնտեղից և
մեր մատանիները կվերցնենք, —պատասխանեց
Սուրբիկը։

— Դե, այդ ձեր գործն ե, ահա, բոնիր,
չկորցնես, հենց թեկուզ ծախեք ել, ավելի չար-
ժե, —տասց քեռին և մի յերեք ուուրլիանոց դր-
բեց Սուրբիկի բուռը։

— Քեռի, մայրիկս ինսպրեց, վոր ինձ քա-
րածուխի հանքերի ճանապահնը սովորեցնես։

— Այ, լավ լիիր, կգնաս կայարան, կհար-
ցնես, թե Քութայիս տանող գնացքը վորն ե,
կնստես վագոն, կգնաս Քութայիս, այնտեղի

կայարանում կհարցնես, թե Տկվիրուլի տանող գնացքը վորն եւ Այդպիսով կհամես Տկվիրուլի ու կտնես հորդ, — պատախաննեց քեռի Պետրոսը և նորից անցավ իր դործին:

Սուրբիկը ուզում եր մի քանի հարցեր ևս տալ, բայց քեռին այլևս ուշադրություն չդարձրեց նրա վրա և ձեռքով նշան արեց, վոր հեռանա:

«Քութայիս», «Տկվիրուլի», — ճանապարհին այս բառերն եր կրկնում Սուրբիկը շարունակ և մտածում, թե ինչպես կհանդիպի հորը, թե ինչպես հայրը՝ մրոտ շորերը հազին կհամբուրե, և գեռ ելի շատ կմտածեր նա, բայց հանկարծ նրկատեց, վոր արդեն հասել և իրենց տանը:

Կարճ ժամանակից հետո, Գայանեն Սուրբիկի ձեռքից բռնած, արտասուրբը սրբելով, գնում եր դեպի կայարան:

Կայարանում նրանք տեղեկացան, վոր Սուրբիկը փոքր եւ և նրա համար տոմսակ հարկավոր չե գնել:

Գնացքի մեկնելու ժամանակը արդեն հասել եր:

Չնայած մոր ինդրանքին, Սուրբիկը բացի 5 հատ բլիթից և մի քսան-կոպեկանոցից, վոչինչ չվերցրեց և բարձրացավ վագոն:

Վագոն հստելով, նա գլուխը գուրս հանեց պատահանից, իսկ մայրը ներքեց, պատահանի առաջ կանգնած, խորհուրդներ եր տալիս նրան, արտասուրբը զսպելով.

— Յերբ տեսնես, վոր հայրդ այնտեղ չե, անմիջապես վերադարձիր, կայարաններում չիջնես, յերեխանների հետ չկուվես, չմրսես և այլն: Զանգը յերեք անգամ խփեց:

Ծոգեկառքը մի յերկար սուրբ արձակեց և մկնեց շարժվել: Մայրը քարացած կանգնել եր իր տեղում, իսկ Սուրբիկը շարունակ նայում եր նրան, մինչև վոր կորավ իր աչքից: Ինքն ել չիմացավ, թե ինչպես արտասուրբի յերկու խոշոր կաթիլներ զլորվեցին նրա այտերից:

Սուրբիկը կուչ յեկավ մի անկյունում: Նա իր աչքերը մի կետի հառած՝ մտքով վերադարձել եր տուն: Նա հիշեց իր յեղորը՝ Լևոնիկին, քույրերին, մանավանդ փոքրիկ Հայկուշին և զղաց, թե ինչո՞ւ միմիայն մի անգամ համբուրեց նրան:

Նրա գիմաց նստած եր մի ընտանիք, յերկու մանր յերեխաններով: Նրանք շարունակ նայում եյին Սուրբիկին և զարմանում, թե ինչպես այս փոքրիկ տղան մենակ ճանապարհորդում եւ:

— Ու՞ր ես գնում, տղաս, — հայրցրեց այդ ընտանիքի հայրը հետաքրքրությամբ:

Սուրբիկը սթափվեց և զգաց, վոր ինքը վագնումն և զանգում, ոտարների մեջ և պատահանեց.

— Յես գնում եմ Տկվիրուլի հորս գտրելու:

— Ինչպես թե զանելու, միթե հայրդ կորուծ եւ:

Սուրբիկը համառոտ պատմեց հոր պատմությունը և ավելացրեց, վոր ինքն անպատճառ կը դժնի հորը:

— Բայց այդքան յերկար ճանապարհ ի՞նչ պես կարող ես գնալ մենակ, — հարցրեց անծանվոթը զարմացած:

— Ի՞նչ կա վոր, գնացքը պետք ե տանի ինձ, — պատասխանեց Սուրբիկը համարձակ:

— Կեցցես, աղաս, ինչպես տեսնում եմ, դու վոչ թե Տկվիբուլի, այլ մինչև Փարիզ ել կարող ես գնալ:

Գնացքը սրանում եր առաջ:

Քութայիս գնալու համար պետք եր շեղվել ընդհանուր ճանապարհից: Ռիոն կայարանից 8 վերսա տարածության վրա կար հատուկ գնացք, վոր անուում եր գեղի Քութայիս: Քեսի Պետրոսը այդ չեր բացատրել Սուրբիկին: Յերբ հասան Ռիոն կայարանը, դիմացի բարի մարդի նըրան տարավ նստեցրեց Քութայիսի գնացքը:

Գնացքը վոր հասավ Քութայիսի կայարանը, արդեն գիշերվա ժամը 6-ն եր:

Սուրբիկը անմիջապես դիմեց առաջին պատահած կոնդուկտորին և կոստաված ոռւսերենով հարցրեց, թե վոր գնացքով պետք ե գնալ Տկվիբուլի:

— Եհ, աղա, ուշացել ես. Տկվիբուլիի գընացքը մեկնում ե շաբաթը յերկու անգամ՝ կիրակի և չորեքշաբթի որերը, այսոր կիրակի յէ և գնացքը մեկնել ե առավոտյան ժամը 7-ին:

Դու պետք ե սպասես մինչև չորեքշաբթի, — պատասխանեց կօնդուկտորը և հեռացավ:

Կարծես թե Սուրբիկի դիմին սառը ջուր ածեցին... Մինչև չորեքշաբթի վարտեղ պետք ե ասպեր նա, ի՞նչ աներ... Մի քանի ըոսկե կանգնած մնաց իր տեղում. վերջը յերբ ուշի յեկավ, մտավ կայարանի դահլիճը և նստեց ալժոռին: Արտասուրքը խեղղում եր նրան. միթե այդքան դժվար եր Տկվիբուլի համնելլ:

Նա չափից գուրս հոգնած եր, ուստի նստած տեղը քնեց: Գիշերը մի քանի անգամ զարթնեց նա, բայց քոնը արդեն հաղթել եր և առանց ուշագրություն դարձնելու թե վորտեղ ե, նորից քնեց:

Ոռավոտյան ժամը 6-ն եր:

Սուրբիկը հուսահատված գուրս յեկավ դահլիճից, դիմեց շուրջը և տեսավ կայարանի ճակատին կպցրած ցուցանակը, վորի վրա պրված եր խոշոր տառերով „Կյուան“:

«Քութայիս» — այս անունը նրան շատ ծանոթ թվաց: Նա հիշեց, վոր իր մայրը յերբեմն ասում եր, թե Քութայիսում մի ազգական ունի, արհեստով դարբին ե, անունն ել Քաշալ Գրիգոր: Այդ հիշերով, նա բավականին աշխատացավ, մի բլիթ կերավ և կայարանի հետեւ դանից գուրս յեկավ գեղի քաղաք:

Քաղաքը միացած եր կայարանի հետ մի յերկար վողոցով: Հենց այդ վողոցով գեղի առաջ

Եր գնում Սուրիկը, չիմանալով թե ուր: Փողոցը
վերջացավ, նա հասավ քաղաքային այգուն: Այ-
դու առաջ կար մեծ հրապարակ, ուր շինուծ եր
մի յեկեղեցի տունց պարխասների: Յեկեղեցու
առաջ խաղում եյին մի խումբ յերեխաներ: Սո-
ւրիկը կանգ առավ և մկնեց դիտել նրանց: Նրանք
ել տեմնելով Սուրիկին շրջապատեցին նրան:

Սուրիկը փորձեց հարցնել, թե վիրաեղ են
գանվում գարբինները, բայց յերեխաները բացի
վրացերենից և վոչ մի լեզու չգիտեյին, իսկ Սո-
ւրիկը վրացերեն չգիտեր:

Բավականին մարդիկ հավաքվեցին նրանց
շուրջը:

Հանկարծ մի մարդ մոտեցավ նրան և հո-
յերեն հարցրեց.

— Դու հայ ես:

— Այո, հայ եմ,—պատասխանեց նա ուրա-
խացած և անմիջապես հարցրեց, թե վիրաեղ եր
գանվում Քաչալ Գրիգորի գարբնոցը:

— Արի, բարս, արի,—ասաց անձանոթը և
ըսնելով Սուրիկի ձեռքից առաջ առափ: Ճանա-
պարհին Սուրիկը բացատրեց նրան իր ճանապա-
հարդության նպատակը:

Մի քանի նեղ փողոցներ անցնելուց հետո,
դուրս յեկան մի լայն փողոց:

— Ահա, տղաս, հենց այսպես ուզիղ կգնաս՝
կմոտենաս գարբնոցների շարքին. հենց յերկորդ
գարբնոցը Գրիգորին ե, — ասաց անձանոթը և հե-
ռացավ:

Դարբնոցներից լսվում ելին անվերջ թխթխ-
կոցներ, կայծերը մինչև մայթին եր համում:
Յերկորդ գարբնոցի քուրան հանգած եր: Որը
յերկուշաբթի յեր, իսկ ուստա Գրիգորը յերկու-
շաբթի որերը չեր աշխատում:

Նրա ծեր հայրը քթախոտի տուփը ձեռքին՝
նստած եր գարբնոցում, իսկ մի փոքրիկ տղա-
յել նստած եր գուն առաջ և պայտի մեխեր եր
ձեծում ու ուղղում:

Սուրիկը մոտեցավ տղային և հարցրեց.

— Քաչալ Գրիգորի գարբնոցը այս ե:

— Քաչալը դու յես, ինչո՞ւ յես հայհոյում
հորս, — պատասխանեց տղան և ծուռ-ծուռ նայեց
Սուրիկին:

— Յես չեմ հայհոյում, — ասաց Սուրիկը,
ինքն իրեն մեղավոր զգալով, — նա մեր բարե-
կամին ե:

— Խանութը այս ե, բայց ինքն այստեղ
չե, քիչ սպասիր, կգա:

— Մինչ Սուրիկը հետաքրքրությամբ դի-
տում եր, թե ինչպես տղան վարժ ձեռվ ձեծում
եր մեխերը, նրա հետեւ կանգնեց մի հակա մարդ,
լայն թիկունքով և խոպոտ ձայնով հարցրեց.

— Ի՞նչ ես ուզում, բարս:

— Հայրիկ, քեզ ե հարցնում, — ասաց տղան:

— Ո՞վ ես, այ տղա, վիրաեղից ես յեկել,
— հարցրեց Գրիգորը շարունակ Սուրիկի աշքե-
րին նայելով, կարծես թե ուզում եր ճանաչել:

— Յես Բաթումից եմ յեկել, Գայանելի
վորդին եմ,—կմկմաց Սուրբիկը:

— Գայանելի վորդին... ենե... այդ լավ ե,
արի, բայս, արի,—ասաց Գրիգորը և զրկելով
Սուրբիկին տարավ գեղի տուն:

Սուրբիկը լավ ընդունելություն գտավ ուս-
տա Գրիգորենց տանը. իմանալով նրա նպատաշ-
կը, գովեցին, քաջալերեցին և խոստացան ամեն
կերպ աջակցել նրան:

* * *

Հասավ չորեքշաբթի որը. մի շատ գեղեցիկ
գարնանային առավոտ:

Ժամը 6-ին կայարանի յերկար փողոցով
ոլանում ե մի կառք, մեջը նստած հսկա գար-
դին Գրիգորը, իսկ նրա կողքին կուչ յեկած Սու-
րբիկը. Մի ժամի չափ կայարանում սպասելուց
հետո՝ դարբին Գրիգորը Սուրբիկին նստեցնում է
Տկվիբուլիի գնացքը:

Սուրբիկի ուրախությանը չափ չկար:

Նա տեղեկացել եր դարբին Գրիգորից, վոր
Քութայիսից մինչև Տկվիբուլի 46 վերստ ե, ըն-
դադմենը յերեք կայարան, իսկ շորրորդը Տկվի-
բուլին ե, ուր իր հայրիկին պետք ե հանդիպի:

Անտ առաջին կայարանը, վորի ճակատին
զրված ե «Серные воды» (հանքային ջրեր),
յերկրորդը «Гелаты» (Գելատի), յերրորդը «Са-
цири» (Սացիրի) և հիմա արդեն կլինի զրված
«Тквибули» (Տկվիբուլի)... Քանի առաջ ե անց-

նում գնացքը, այնքան Սուրբիկի սիրալ ավելի
արագ ե բարախում:

Վերջապես գնացքը կանգնեց:

«Տկвибуլի»—զրված եր վորդիկ և անշուք
կայարանի ճակատին՝ մի մրոտ ցուցանակի վրա
մանր տառերով, բայց այդ ցուցանակը իր բոլոր
տեսածներից ամենից զեղեցիկը թվաց նրան:
Գնդակի արագությամբ գուրս նետվեց նա վա-
գոնից ու դիմեց զեպի միակ փողոցը, վորը
բաղկացած եր ընդամենը 25—30 մանր խա-
նութներից: Նա փողոցի մի ծայրից անցավ մին-
չև մյուսը, հայրիկը չկար, նետ գարձավ մինչև
կայարան, դարձյալ չկար. դիմեց չորս կողմը,
կայարանը ամբողջովին քարածուիի վագոննե-
րով եր շրջապատված, բայց վոչ հանք եր յերե-
վում և վոչ ել իր հայրը:

Նա մի ճաշարանի դռան առաջ կանգնեց և
սկսեց դիմել զեպի ներս. սեղանների շուրջը
նստած ելին մրոտ զգեսաներով մարդիկ, նա
ամեն մեկին առանձին-առանձին դիմեց, բայց
հայրիկը չկար:

Վերջապես ճաշարանից մի մարդ դուրս յե-
կատ: Սուրբիկը դիմեց նրան սուսերեն.

— Հայրիկս վհրաեղ ե:

— Հայրիկիդ ով ե, ինչ գործի յե, — հարցը եց
անձանոթը հետաքրքրվելով:

— Քարածուիի հանքերումն ե աշխատում:

— Քարածուիի... հա, հասկացա. այ, դի-
մացդ նայիր, տեսնում ես այն վագոննետկան,

շուտով վազիր, յեթե վոչ՝ կուշանաս, նրա վրա
նստած ե ինժեները, նա գնում է հանքերը, նը-
րան ինքըիր, նա կտանի քեզ քո հոր մոտ:

Յեզի իսկապես, կայարանի դիմաց, յերկա-
թուղու գծի վրա կանգնած եր մի վագոնետկա՝
բազկաթոռով, վորի վրա բազմել եր մի գեղեց-
կագեմ յերիտասարդ փայլուն կոճակներով:

Սուրբիկը վազեց գեղի ինժեները և կանգ-
նեց նրա առաջ, չփառենալով, թե ինչպես հաս-
կացներ նրան:

— ԿТО ԽՕՉԵШЬ (Ի՞ՆՉ ԵԱ ՈՒՂՈՒՄ) — հար-
ցրեց ինժեները հետաքրքրությամբ նայելով Սու-
րբիկին:

— Հայրիկիս եմ ուղում, — պատասխանեց
Սուրբիկը վախելով:

— Հայրիկի՞դ, ով ես դու, — հարցրեց ինժե-
ները, — ում վորդին ես:

— Միիակի, քարածուխի հանքերումն ե
աշխատում:

— Հա... դե արի նստիր, տանեմ քեզ հայ-
րիկիդ մոտ, — ասաց ինժեները և հրամայեց բան-
վորներից մեկին, վոր ոգնե Սուրբիկին նստելու:

Տկվիրուլիից մինչեւ նախշիրա, ուր գանվում
ելին ածխահանքերը, հինգ վերստ եր, վոր միա-
ցած եր յերկաթուղագծով: Ահա այդ գծի վրա
յեր, վոր վագոնետկան կամաց-կամաց առաջ եր
ընթանում:

Վերջապես նրանք հասան նախշիրա առված

առաջ՝ ինժեները իջավ, բանվորներից մեկը գրր-
կելով իջեցրեց Սուրբիկին և:

— Արի ինձ հետ, — պատվիրեց ինժեները
նրան և ինքը առաջ անցավ:

Սուրբիկը նրա հետեւից գնում եր, առանց
աչքը հեռացնելու նրա համազգեստի հետեւի յեր-
կու փայլուն կոճակներից:

Հասան մի բավականին մեծ հրապարակ,
վորի մեջտեղը կար մի մեծ տուն. դա ինժեների
ընակարանն եր:

— Ահա այս ճանապարհով ուղիղ կդնաս, —
դարձավ նա Սուրբիկին, — և հենց առաջին պա-
տահած անակումն ե ազլում հայրդ. նա գիշերն
ե աշխատում, այժմ տանը կլինի, — ասաց ու-
քայլերն ուղղեց գեղի մեծ տունը:

Սուրբիկը սկսեց արտգ-արագ վազել ինժե-
ների ցույց աված նեղ ճանապարհով, վորի յեր-
կու կողմը պատած եր չինարի անտառներով:
Ճանապարհը բավականին յերկար եր. մի քա-
ռորդ ժամ ակեց, մինչեւ վոր նա հասավ առա-
ջին պատահած անակին:

Նա հուսահատվեց, յերբ աեսավ դռան վրա
կախած մի մեծ կողպեք: Արագությամբ վեցեց
գեղի պատուհանը, վեղկերից քարշ ընկներով մի
կերպ նայեց ներս, աեսավ իր հոր անկողինը,
այս, ճանաչեց անկողինը, իր մայրիկն եր կո-
րել: Բացի իր հոր անկողից, կային ուրիշ յեր-
կու մահճակալներ ևս:

ԱՅԱԼՈՒԹԵՐ
ԻՆՍՏԻՏՈՒԴ
ՊԵՏՈՒԱՅԵԴԵՆԻ
Ակադեմիա Խառ
Քայլերով մի մարդ և գալիս գեղի տնակը. նա,
գլուխը քարշ գցած, ձեռքերը հետեւ. գարսած,
խիստ մտազբաղ յեկավ և առանց Սուրբիկի վրա
ուշադրություն դարձնելու, անակի կողքով ան-
ցավ: Սուրբիկը վեր թռավ տեղից, մի լավ գննեց,
հետո վրա ընկավ:

— Հայրիկ, — բանականչեց նա և փաթաթ-
վեց հորը:

— Սուրբիկ, այդ դժու յես, յերբ յեկար, ի՞նչ-
պես յեկար, միթե մենակ ես, — վրա տվեց հայ-
րը դարմացած և սկսեց համբուրել նրան:

— Այո, մենակ եմ, — պատասխանեց Սու-
րբիկը և նրանք մտան հայրիկի տնակը:

— Հայրիկ, ինչու մեղ նամակ չեյիր գրում,
— ասաց Սուրբիկը քիչ հանգստանալուց հետո:

Հայրը բացատրեց նրան, վոր այդտեղ ոռ-
ճիկ ստանում են յերեք ամիսը մի անգամ և
վոր դատարկ նամակ չեր ուզում ուղարկել:

Սուրբիկը ստատիկ հոգնած եր, ուստի դու-
խը դրեց հոր ծնկանը և քաղցր քնեց:

Յերկու որից հետո Սուրբիկը իր հորից ստա-
ցավ հիսուն սուրբի և ուրախ-ուրախ սլացավ գե-
պի Բաթում:

Մի շաբաթ չանցած, Միհակի ընտանիքը
մեկնում եր դեպի Տկվիրուլիի ածխահանքերը
Սուրբիկի ստաջնորդությում:

ՀՀ Ազգային գրադարան



NL0399400

8312

Գիր 15 կոպ.

300

4-ая типография Полиграфтреста.

Главлит № 2110. Тираж 1000

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР